

# ՆՈՐ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՎՐԱՅ

## 15 ՄԵՌԵԱԼ (4 ՄԱՆՈՒԿ, 5 ԿԻՆ) 120 ՎԻՐԱԻՈՐ (11 ՄԱՆՈՒԿ)

### ՄԷԿ ՕԴԱՆԱԻ ՎԱՐ ԱՌՆՈՒԱԾ

### ԱԴԻԲԵՋԱՆ ՉԻ ՅԱՐԳԵՐ ՀՐԱԴԱԴԱՐԸ

Սեպտեմբեր 1-ին, Երեքշաբթի առտու Երեւանէն մեր առած լուրերը շատ ծանր էին ինչ կը վերաբերէր մանուկանոց նախորդ իրիկուան ուժեղացող Ստեփանակերտի վրայ:

Երեք օդանաւերով է, որ Երկուշաբթի, Օգոստոս 31, ժամը 18-30-ին Ազերիները ուժեղացող են Արցախի մայրաքաղաքը, որու հետեւանքով 15 մեռեալ կար (4 երախտայ, 5 կին) եւ 120 վիրաւոր որոնց մէջ 11 երախտայ: Մէկ օդանաւ վար առնուած է: Այս մասին, ոչ իսկ խորհրդածութիւն կարելի է ընել այլեւս, քանի որ նպատակը յստակ է. խուճապ ստեղծել բնակչութեան մօտ (բնիկներու կողքին 30 հազար դաղթական կայ) որպէսզի մեկնի եւ Արցախը պարզուի: Լաչինի ճամբուն ալ բաց ըլլալը միայն կը զլուրացնէ այս նպատակին իրագործումը:

Ալմա-Աթայի հրազդարն ալ, սկզբունքով, ի դօրու պէտք է գառնար Սեպտեմբեր 1-ին, բայց, Ազերիները խախտած են եւ Երկուշաբթի կէս գիշերէն ետք (այսինքն Սեպտեմբեր 1-ի առաջին ժամերուն իսկ) ուժեղացող ծայր տուած են Հաղրութի, Մարտունիի եւ Մարտակերտի շրջանը ինչ կը վերաբերի Ղարաբաղի, բայց նաեւ Կրասնոսելսկ եւ Կապան, այսինքն սահմանամերձ շրջանները: Հրազդարի գործադրութեան հսկելու համար Երեւան հասած էր Օգոստոս 31-ին, նախագահ Նալբանդյանի ներկայացուցիչը՝ Հասան Կաթոնով, որ մասնակցած էր Ալմա-Աթայի հանդիպումին: Ընդունուած է նախագահ Լ. Տէր-Պետրոսեանի կողմէ:

Նախքան այս դէպքերը, Օգոստոս 31-ի տուեալներով ընդհանուր կացութիւնը հետեւեալ պատկերը կը պարզէր:

Կիրակի, ամբողջ օրը չէին դադրած աղբրեջանական յարձակումները եւ ինչպէս արդէն դրած էինք մեր նախորդ թիւերով, բուն մարտեր կը մղուէին Մարտակերտի շուրջ եւ հայկական ինքնապաշտպանութեան ուժերը ստիպուած եղած են պարպելու հայ - յունական Մեհմանա գիւղը: Կռիւներու ընթացքին Ազերիները 50 մեռեալ ունեցած են: Հայկական ճակատի կորուստները չեն ճշդուած: Վիրաւորներ եւ նիւթական վրաններ կան նաեւ Մարտունիի շրջանի Ազուր, Հաց եւ Նորչէն գիւղերը:

Շահումեանի շրջանն ալ միշտ մարտեր կան եւ հայկական ինքնապաշտպանութեան ուժերը յաջողած են դրաւել Գիւլիստան գիւղը: Այս կապակցութեամբ Շահումեանի շրջանի ինքնապաշտպանութեան կեդրոնը կը պահանջէ որ գիւղերէն հեռանան մնացած հայ բնակիչները, որպէսզի անմեղ նոր զօհեր չաւելան:

Շատ կատարելագործուած զէնքերով է որ Ազրբեջան շարունակած է յարձակումները սահմանամերձ Կրասնոսելսկի եւ Վաճան գիւղի վրայ: Հայկական ուժերը ստիպուած եղած են նահանջել: 48 մարտական մարտերու ընթացքին, հայկական կողմը թնկեցած է 6 մեռեալ եւ 15 վիրաւոր:

Ուժեղացող են նաեւ Տաուշի շրջանի

նի Արժուարեղ եւ Այդեձոր, Գորիսի շրջանի Շուռուխ գիւղերը:

Արցախի Գերազոյն Խորհուրդի նախագահի պաշտօնակատար Գէորգի Պետրոսեան Ղարաբաղի Հանրապետութեան անունով բողոք բարձրացուցած է եւ դիմած միջազգային հաւաքականութեան (որուն շատ հոգն ալ չէ, անշուշտ) որովհետեւ Ազրբեջանի Խորհրդարանը Մարտակերտի շրջանի սրոշ գիւղերը վարչականօրէն ենթարկած է Միրբաչիի:

Լը Մոնա (Սեպտեմբեր 1) քանի մը տող կը յատկացնէր Ղարաբաղի եւ կը հաղորդէր որ Օգոստոս 29-ին, Շարաթ, կռիւներու հետեւանքով (Մարտակերտի շրջանի վերին Հոռաթաղ գիւղ) 30 ազերի զինուոր եւ 2 Հայ մեռած են:

Ֆիկաո (Սեպտեմբեր 1) կ'անդրադառնայ Ալմա-Աթայի հրազդարին, առանց շատ հաւատք ընծայելու: Դէտերն ալ, կ'ըսէ թղթակիցը, կասկածամիտ են: Լաչինի դօրին, շարաթափերջին, բուն կռիւներու դաշտ եղած է:

Ե	Փ
Ր	Ա
Ե	Հ Ե Ռ Ա Տ Ի Պ Ր
Ն	Ի
Ն	Ձ

Ե Ր Ե Ի Ա Ն  
(«ԱՐՄԷՆՓՐԷՍ» - ՕԳՈՍՏՈՍ 25 / 29)

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Օգոստոս 24-ին Խ. Յարութիւնեան ընդունած է Ֆրանսայի Հայկական միջմասնագիտական Ընկերութեան (ԺԷ - Ի - Ա) նախագահ Մանուէլ Տէյրմէնճեանը: Վարչապետը յատկապէս գնահատած է կազմակերպութեան հիմնած գործառններու դպրոցը որ շուկայական տնտեսութեան պայմաններուն համար զեկալար ու վարչական տարրեր կը պատրաստէ: Մ. Տէյրմէնճեան տեղեկացուցած է որ ընկերութիւնը վեց ծրագիր ներկայացուցած է Եւրոպայի տնտեսական Համագործակցութեան, որոնք առնչուած են Հայաստանի դրամատուններու եւ ֆինանսական համակարգին, Երեւանի փոխադրութեան միջոցներուն, մեթրոյին, ինչպէս նաեւ ճամբաներու: Խ. Յարութիւնեան եզրակացուցած է թէ

(Շար. ր Դ. Է9)